Արձանագրություն N 3
ՋԿ-ԳՀԾՁԲ-22/12-Տ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 16 սեպտեմբերի 2022թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Սարգսյանը, Ն. Ավետյանը և Ս. Ալեքսանյանը:
Քարտուղար՝ Ս. Գալստյանը:

Մասնակից ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար ջրամբարների վերականգնման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների գնման ՋԿ-ԳՀԾՁԲ-22/12-Տ ծածկագրով ընթացակարգի մասնակիցներ «Ռիջիդ» ՍՊԸ-ի և «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են 14.09.2022թ. թիվ 2 որոշմամբ պահանջված անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ փաստաթղթեր: Ներկայացված փաստաթղթերով մասնակից «Ռիջիդ» ՍՊԸ-ի կողմից շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները:

«Բագարանի Բարիք» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը թերի են: Ներկայացված չեն հրավերով պահանջվող և գնահատող հանձնաժողովի 14.09.2022թ. թիվ 2 որոշմամբ արձանագրված առաջադրանքի կատարման համար պահանջվող սարք-սարքավորումների, կահավորանքների, անհրաժեշտ գործիքակազմի, լաբորատոր հետազոտությունների կարողությունները հիմնավորելու համար դրանց առկայության, կամ վարձակալության, կամ պայմանագրային հիմքով լիցենզավորված ենթակապալառուի ներգրավման կամ այլ ձևով հիշյալ ծառայությունների մատուցման կարողությունը հավաստող փաստաթղթերի պատճենները:

Հանձնաժողովի որոշումը

Փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը որոշեց.

1. ՋԿ-ԳՀԾՁԲ-22/12-Տ ծածկագրով ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների ընտրված մասնակից հայտարարել «Ռիջիդ» ՍՊԸ -ին,
2. Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասնակից «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ի հայտը մերժել՝ ՋԿ-ԳՀԾՁԲ-22/12-Տ ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով,
3. Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին,

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար անգործության ժամկետ չի սահմանվում: Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի համար անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը

հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը,

4. Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը ծանուցել ՋԿ-ԳՀԾՁԲ-22/12-Տ ծածկագրով ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների ընտրված մասնակից «Ռիջիդ» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Անդամներ ---------- Կ. Սարգսյան

---------- Ն. Ավետյան

---------- Ս. Ալեքսանյան

Քարտուղար ---------- Ս. Գալստյան